

# ՔԻՄԻԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ն. Ա. ՅԻԳՈՒՐՈՎՍԿԻ

## ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԵՏԱԼՈՒՐԳԻԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԲՆՕՐՐԱՆ

Ինչպես հայտնի է, հնում քիմիական գիտելիքների առաջացման, իսկ հետագայում նաև քիմիայի՝ իբրև գիտության ձևավորման համար աղբյուր են ծառայել հիմնականում պրակտիկայի և արտադրության երեք բնագավառ. 1. մետալուրգիական տեխնիկան, 2. դեղագործությունն ու կոսմետիկան և 3. ներկարարական արվեստը: Քիմիական գիտելիքների նախնական զարգացման վրա հնում առանձնապես մեծ ազդեցություն է գործել մետալուրգիական տեխնիկան: Այդ մասին է, մասնավորապես, վկայում ալքիմիական ժամանակաշրջանի երկարատևությունը, երբ որոնումների գլխավոր պրոբլեմը մետաղների փոխակերպումն էր:

Հանքաքարից մետաղի կորզումն ու մետաղամշակությունը ծագել է խոր հնադարում: Հնագիտական տվյալները ցույց են տալիս, որ արդեն մ. թ. ա. IV—III հազարամյակներում մետաղների արդյունահանումն ու մշակումը հայտնի է եղել եվրասիական մայրցամաքի ընդարձակ տարածքը բնակեցնող շատ ժողովուրդների ու ցեղերի (հյուսիսային լայնության 20-ից մինչև 40°-ի միջև ընկած գոտում): Հենց այս գոտում են առաջացել հնագույն քաղաքակրթություններն ու ստրկատիրական հզոր պետությունները. Միջագետքի, Անդրկովկասի, Փոքր Ասիայի, Արաբական թերակղզու, Միջերկրածովյան պետությունները, Եգիպտոսը, Հյուսիսային Աֆրիկան և, այնուհետև, Ատլանտյան օվկիանոսից այն կողմ՝ Մեքսիկան:

Հնագույն կուլտուրաների մեջ առավել ուսումնասիրվածը Հին Եգիպտոսի կուլտուրան է և, մասամբ, տեխնիկան: Եվ դա հասկանալի է: Գրեթե 200 տարի շարունակ Եգիպտոսի տարածքում կատարվում են հնագիտական որոնումներ, որոնք հարուստ նյութ են ընձեռում: Աշխարհում չկա թերևս մի խոշորագույն թանգարան,

ուր շինի եղիպտական, բաժին և այն էլ՝ սովորաբար, հարուստ ներկայացված: Բացի այդ, Ալեքսանդրիայի ահադեմիայի ժամանակներից, որը դոյառեկ է շուրջ 1000 տարի (մինչև VII դարը), մնացել են արտադրական տարբեր տեխնիկաների վերաբերյալ որոշ գրավոր հուշարձաններ ու վկայություններ:

Ուստի հասկանալի է, որ հնագույն արտադրությունների տեխնոլոգիան նկարագրող աշխատություններում, մասնավորապես Բերտոլոյի<sup>1</sup>, Լիպմանի<sup>2</sup>, Լուկասի<sup>3</sup> և մյուս հեղինակների մոտ ամենից շատ տեղեկություններ կան Հին եգիպտոսի տեխնիկայի մասին: Միջագետքի, Փոքր Ասիայի և Անդրկովկասի երկրների մետալուրգիական տեխնիկան անհամեմատ ավելի քիչ է ուսումնասիրված: Անդրկովկասի մետալուրգիային նվիրված մենագրական աշխատանքներ գրեթե չկան: Այս պատճառով էլ մինչև վերջերս այն սխալ եզրակացություն էր իշխում, թե մետալուրգիական տեխնիկայի հայրենիքը պետք է համարել բացառապես Հին եգիպտոսը, որ հայտնի է իր քաղաքակրթության 5000-ամյա պատմությամբ:

Մինչդեռ մետաղի արդյունահանման ու մշակման տեխնիկայի վերաբերյալ հնագիտական տվյալների պարզ համադրումը ցույց է տալիս, որ եգիպտոսից բացի մետալուրգիական տեխնիկայի ծննդավայր կարելի է համարել նաև մի քանի այլ երկրներ: Այսպես, Պրոֆուլա Չանդրա Ռայի<sup>4</sup> աշխատության մեջ նշվում է, որ այն դեպքում, երբ եգիպտոսում և Միջագետքում վաղուց ի վեր հայտնի էին ոսկին, արծաթը, պղինձը և կապարը, անագային բրոնզը Միջագետքում ավելի շուտ է հայտնի եղել, քան եգիպտոսում. կիշում և Ուրում գտնված իրերը թվագրվում են մ. թ. ա. 4000 թվականով: Փոքր-ինչ ավելի ուշ այդ նույն վայրերում ստացել են անտիմոնային բրոնզ, երբ դեռ եգիպտոսում այն չկար: Տարակարծություն կա երկաթի ու պողպատի մետալուրգիական տեխնիկայի և՛ ի հայտ գալու ժամանակի, և՛ տեղի վերաբերյալ:

<sup>1</sup> M. Berthelot, Collection des anciens Alchimistes Grecs, Paris, 1888 (tt. 1-3).

<sup>2</sup> Edmund O. von Lippman, Entstehung und Ausbreitung der Alchemie, Berlin, 1919.

<sup>3</sup> A. Лукас, Материалы и ремесленные производства Древнего Египта М., 1958.

<sup>4</sup> Acharya Prafulla Chandra Rây. History of Chemistry in ancient and medieval India, Calcutta, 1956, p. 307.

Համապատասխան գրականության մանրամասն տեսությունը մեղ շատ հեռուն կտանի: Ուստի ես կսահմանափակվեմ միայն մի քանի տվյալներով, որոնք մետալուրգիական տեխնիկայի առաջնությունը տալիս են Անդրկովկասի շրջաններին: Մարտին Լևեյ<sup>5</sup> Հին Միջագետքի քիմիական տեխնոլոգիային նվիրված իր գրքում, որ լույս է տեսել համեմատաբար վերջերս, մասնավորապես նշում է, որ մ. թ. ա. III հազարամյակում պղինձը Միջագետք է ներմուծվել Անատոլիայից, ավելի կոնկրետ՝ Տիդմուրնից և Դուրկամիտից: Այստեղ գտել-ձուլել են պղինձ և պատրաստել բրոնզ: Այդ քաղաքները գտնվում էին Բողազբոյից և Քյուլթեփեից արևելք, Վան և Ուրմիա լճերից հյուսիս ընկած շրջանում, այլ խոսքով Հին Հայաստանի տարածքում:

Երկաթի մետալուրգիայի սկզբնավորման մասին ուշագրավ տեղեկություններ կան Բերնարդ Նեյմանի գրքում<sup>6</sup>, որը հրատարակել է Ֆրայբերգի (Սաքսոնիա) լեռնային ակադեմիան հեղինակի մահից անմիջապես հետո: Բերված տվյալները ցույց են տալիս, որ երկաթե առարկաները (եթե չհաշվենք մետեորիտային երկաթից պատրաստված շատ հին իրերը և այնպիսի կասկածելի գտածոներ, ինչպես, ասենք, Քեոփսի բուրգի որմածքում հայտնաբերված դուրը) առաջին անգամ երևացել են «սեսպագիր մշակույթի» ժողովուրդների մոտ, այսինքն՝ Միջագետքում և Ուրարտուում՝ գրեթե նույն շրջաններում, ուր երևան են եկել անագի, կապարի, ծարրի և մկնդեղի բրոնզը (Ի. Ռ. Սելիմխանով)<sup>7</sup>:

Այսպիսի տեղեկությունները, բնականաբար, նյութական մշակույթի պատմաբանների ուշագրությունը բեկոում են մետալուրգիական տեխնիկայի հայրենիքի հարցի վրա:

Հնագիտական նոր տվյալների ի հայտ գալուն և մետալուրգիական տեխնիկայի թանգարանային նմուշների ուսումնասիրմանն ու համադրմանը զուգընթաց ավելի ու ավելի ակնհայտ է դառնում, որ Հին Հայաստանի և Փոքր Ասիայի՝ նրան հարող շրջանները հնում եղել են մետալուրգիական տեխնիկայի՝ պղինձի, բրոնզի, երկաթի, ինչպես նաև պողպատի ձուլման կարևոր օջախներ: Այս եզրահանգմանն է գալիս, մասնավորապես, «Մետաղների

<sup>5</sup> Martin Levey, Chemistry and chemical Technology in ancient Mesopotamia, Amsterdam-London, New York-Princeton, 1959, p. 197.

<sup>6</sup> Bernhard Neumann, Die ältesten Verfahren der Erzeugung technischen Eisens. Akad. Verlag, Berlin, 1954, s. 72—73.

<sup>7</sup> И. Р. Селимханов, Историко-химические и аналитические исследования древних предметов из медных сплавов, Баку, 1960, стр. 157.

պատմութիւնը» գրքի ճանաչված հեղինակ Լ. Էտշիսոնը<sup>8</sup>, որն իր աշխատութեան մեջ քանիցս նշում է մետալուրգիական որոշ հղանակների առանձնահատուկ հնութիւնը<sup>9</sup>:

Ասենք, երկաթի ու պողպատի հարցում մյուս հեղինակները նույնպէս, այդ թվում Լիպմանը, Նեյմանը և ալքը, որոնցից մեջբերումներ արեցինք, նշում են հարավային Հայաստանի տարածքը բնակեցրած խալիբների, քաղղեացիների և մյուս ցեղերի ակնառու դերը երկաթի հանքաքարի վերականգնման տեխնոլոգիայի զարգացման գործում:

Այս կարճառոտ հոդվածում ես կուզենայի Հին Հայաստանի մշակույթի ու տեխնիկայի պատմութիւնը հետազոտողների ուշադրութիւնը հրավիրել Հայաստանի և Անատոլիայի մետալուրգիական տեխնիկայի ուսումնասիրման պրոբլեմի և այնպիսի առեղծվածների բացահայտման վրա, ինչպէս, ասենք, պղնձյա ու բրոնզե առարկաների առատութիւնը, այն դեպքում, երբ օքսիդային պղնձաքարը, առհասարակ, ավելի հազվադեպ է հանդիպում, քան սուլֆիդային հանքաքարը: Մենք լուկ կոահել կարող ենք, որ պղնձի և բրոնզի արտադրութեան ժամանակ լայնորեն օգտագործվել են սուլֆիդային հանքաքարերը. այդ մասին է ակնարկում նաև Լենյը<sup>10</sup>, նշելով, թէ հնարավոր է, որ սուլֆիդային հանքաքարը նախապէս ենթարկվել է օքսիդացնող թրծման: Շատ ավելի ուշ օքսիդացնող թրծումը նկարագրվել է գրականութեան մեջ Թեոֆիլոս-երեցի<sup>11</sup> կողմից X դարում:

Հարկ չկա այստեղ բերել ինչպէս հնագիտական բնույթի հանրահայտ տեղեկութիւնները, այնպէս էլ մետաղների ու համաձուլվածքների հնագույն անվանումների ստուգաբանական տվյալները, որոնք մասամբ վերլուծված են վերը նշված գրականութեան մեջ և, հատկապէս, Լիպմանի կողմից:

Ինձ թվում է, որ Հին Հայաստանի տարածքում մետալուրգիական տեխնիկայի պատմութեան ուսումնասիրութիւնը ոչ միայն կպարզաբանի ու կընդլայնի Հին Հայաստանի հարուստ նյութա-

<sup>8</sup> *Leslie Aitchison, A History of Metals. Vol. I. London, 1960.*

<sup>9</sup> Այդ տվյալները բերված են իմ գրքում. տե՛ս *Н. А. Физуровский, Очерк общей истории химии, т. I, М., 1969, էջ 38.*

<sup>10</sup> *Martin Levey. Ibid.*

<sup>11</sup> *On divers Arts, The Treatise of Thophilus, Chicago, 1963, p. 144—145.*

կան մշակույթի վերաբերյալ եղած տեղեկությունները, այլև զգալի ներդրում կլինի հնագարում արտադրության կարևորագույն ճյուղերից մեկի առաջացման հարցի ուսումնասիրության մեջ, այն ճյուղի, որը ուղղակի և խորը ազդեցություն է ունեցել քիմիայի սկզբնավորման ու զարգացման վրա:

Н. А. ФИГУРОВСКИЙ

## ДРЕВНЯЯ АРМЕНИЯ—КОЛЫБЕЛЬ МЕТАЛЛУРГИЧЕСКОЙ ТЕХНИКИ

### Резюме

История металлургии древности—исходный пункт истории развития химических знаний. Первоначальные достижения металлургической техники связаны с цивилизациями, географически расположенными в полосе 20—40° северной широты. Начинаясь на Дальнем Востоке, эта полоса включает Месопотамию, Закавказье, Малую Азию, Египет и продолжается далее на запад, захватывая средиземноморские страны и даже соответствующие территории американского материка.

Литературные источники обычно указывают на почти одновременное зарождение металлургии в районах Месопотамии, Закавказья и Египта. При этом упускается из виду длительный период использования как в этих, так и других странах самородных металлов (медь, золото, метеоритное железо). Находки соответствующих предметов из этих металлов еще не свидетельствуют о наличии техники получения их из руд.

Анализ археологических данных указывает, что в древности медь ввозилась в страны Междуречья и Египет с севера—из Закавказья и Анатолии. Именно здесь и следует искать древнейшие произведения металлургической техники, в частности медные, бронзовые (в том числе мышьяковую бронзу), а также железные, стальные (цементированные) изделия. К этому выводу склоняются теперь видные археологи. Здесь, наиболее вероятно, была впервые выплавлена медь из сернистых руд и получены первые бронзы.

Изучение истории металлургии в районе древней Армении, с привлечением соответствующих археологических, филологических, химических и других данных, представляет весьма важную тему для исследования.